ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

20 հունվարի 2016 թվականի N 05-Ա

ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 11.03.2002թ. թիվ 225 որոշումը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 395-Ա և 2015 թվականի հունիսի 24-ի թիվ 263-Ա հրամանները, աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՀՊ/Ֆ-2/-002 եզրակացությունը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ Ֆ-395/15 գրությունը,<ՈՒՆո Սթոուն> ՍՊԸ-ի 23.12.2015թ-ի «Հայտարարություն»-ը՝

Հրամայում եմ

1. «ՈՒՆո Սթոուն» ՍՊԸ-ի շահագործման նպատակով՝ ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինի և կավերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման 2015 թվականի ապրիլի 16-ի թիվ ՇԱԹ-29/524 թույլտվության մեջ «1.X=4416381 Y=8474347, 2.X=4416367 Y=8474674, 3.X=4416080 Y=8474625, 4.X=4416083 Y=8474507, 5.X=4416170 Y=8474467, 6.X=4416183 Y=8474370» կոորդինատները փոխարինել՝ «1.X=4416381 Y=8474348, 2.X=4416367 Y=8474674, 3.X=4416080 Y=8474625, 4.X=4416083 Y=8474507, 5.X=4416170 Y=8474467, 6.X=4416179 Y=8474399, 7.X=4416212 Y=8474393, 8.X=4416213.2 Y=8474366.5» «ARM WGS-84» կոորդինատային համակարգի» կոորդինատներով:

2. Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 5-օրվա ընթացքում օրենքով սահմանված պահանջների ապահովմամբ նախապատրաստել հրամանի 1-ին կետից բխող փոփոխությունների կատարումը օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման թիվ Պ-524 պայմանագրում և թիվ Լ-524 լեռնահատկացման ակտում,

2) ծանուցել ընկերությանը՝ հրամանը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունը իր կողմից վավերացնելու մասին,

3) լիազոր մարմնի և ընկերության կողմից պայմանագրի փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի (թույլտվություն, ընդերքօգտագործման պայմանագիր, լեռնահատկացման ակտ) փոփոխված տարբերակը:

3. Սահմանված ժամկետում ընկերության կողմից պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի փոփոխված տարբերակը չստանալու դեպքում լիազոր մարմինը կառաջնորդվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468 հոդվածի պահանջներով:

4. Ընկերության կողմից ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի վավերացումից հետո, ապահովել համապատասխան գրառումների կատարումն ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման համապատասխան գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ